ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2022 թվականի N 1188 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 641-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի «Մեկ մաքսային մարմնից մյուսը կամ մաքսային մարմնի մի ստորաբաժանումից մեկ այլ ստորաբաժանում մաքսային ծառայողների տեղափոխման կարգը սահմանելու մասին» N 641-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Ռոտացիան իրականացվում է մինչև մեկ տարի ժամկետով:».

2) 4-րդ կետից հանել «վերադաս» բառը.

3) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Մաքսային մարմնի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կամ մաքսային կետ-բաժնի պետի պատճառաբանված հիմնավորմամբ մաքսային

մարմնի ղեկավարը կարող է հետաձգել ռոտացիայի իրականացումը՝ մինչև երկու տարի ժամկետով:».

4) 7-րդ կետում «Վերադաս մաքսային» բառերը փոխարինել «Մաքսային» բառով, իսկ «մեկ ամիս» բառերը՝ «հինգ աշխատանքային օր» բառերով.

5) 8-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) Մաքսային մարմնի մաքսային հսկողության, հետբացթողումային հսկողության, ներքին անվտանգության, մաքսանենգության դեմ պայքարի վարչություններում՝

ա. բաժնի պետը,

բ. բաժնի պետի տեղակալը,

գ. բաժանմունքի պետը,

դ. բաժանմունքի պետի տեղակալը,

ե. գլխավոր մաքսային տեսուչը,

զ. ավագ մաքսային տեսուչը,

է. մաքսային տեսուչը.»,

բ. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) Մաքսային մարմնի մաքսատուն-վարչություններում, Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն վարչությունում՝

ա. պետը,

բ. պետի տեղակալը,

գ. բաժնի պետը,

դ. բաժնի պետի տեղակալը,

ե. բաժանմունքի պետը,

զ. բաժանմունքի պետի տեղակալը,

է. գլխավոր մաքսային տեսուչը,

ը. ավագ մաքսային տեսուչը,

թ. մաքսային տեսուչը.»,

գ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3) մաքսային կետ-բաժիններում՝

ա. պետը,

բ. պետի տեղակալը,

գ. բաժանմունքի պետը,

դ. բաժանմունքի պետի տեղակալը,

ե. գլխավոր մաքսային տեսուչը,

զ. ավագ մաքսային տեսուչը,

է. մաքսային տեսուչը։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

04.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ